

Մարեր ու Մէտիայիներ, ու մասամբ մը դրացի ժողովուրդները՝ որոնց հետ անոնք խառնուած են :

Այս սրնու մներու կարեորութիւնը չհասկնալու համար՝ հարկ կը համարինք յիշատակութիւն մը ընել ընկերարան Bachofenէն :

«Գիցարանական աւանդութիւնը հաւատարիմ արտայայտութիւնն է դարաշրջաններու կեանքի, որոնք կ'ամփոփեն իրենց սաղմին մէջ հին աշխարհի պատմական էվոլյուսիօնը՝ ամէն մէկ դարաշրջանին. Քերթողական բանաստեղծութիւնը (la poésie) կը ցղայնէ անգիտակցարար զայն շրջապատող կեանքի օրէնքները :» Այս տեսակէտէն նա կը հաստատէ կրօնի քելարիչ մեծ ազդեցութիւնը : Մաք—Լընանի համար նոյնն է Symboleի ու սու մնասիրութիւնը : Այս ուսումնասիրութեամբ վերջինս կը մեկնէ ու կը բացատրէ շատ մը սովորութիւններ : Նա կ'ըսէ. — «Սիմպօլը ժողովուրդի մը անցեալի կենդանի պատկերն է, որուն մէջ նա կ'ապրի. և ի՞նչ միանգամայն նախնական ժողովուրդներու մօտ մենք կը պատահինք իրական արժէք ունեցող սովորոյթներու, անկէ կրնայ հաստատուիլ, որ այս ժողովուրդը անցած բոլոր ընկերական վիճակէ մը՝ նման նախնական ժողովուրդներու ունեցածին :»

Այս գծէն ընթանալով, մենք կը տեսնենք որ հին կրօնները ի՞նչ կը բանան Քիւրդօ—Հայ ազգակցութեան մէկ ճիւղը, և ի՞նչ իրենց ազանդական աւանդութիւնները կը գործադրուին Հայ ու Քիւրդ ժողովուրդներու մէջ մինչև այսօր :

Այիշանը յիշատակութիւն մը ունի այս մասին Սակական կրօնի վրայ խօսած ժամանակ (\*) :

Ընթերցողը անշուշտ համեմատութեան կը դնէ Ֆէրաստիի

---

(\*) «Սկիւթացիներ որ հիւսիսէն արշաւեցին Արևմտեան Ասիա, որմէ անցան Փոքր—Ասիա Քրիստոսի թուականէն վեց դար առաջ՝ ստանց պարզազոյն տարրն է Սակ, Սակք կամ Շակք և որոնց անունով Շակաշէն զաւառի անունը, անոնց հարձուժով հաստատուած են Սակական sofեր ու Բարեկենդաններ :»